ՏԵՂԵԿԱՆՔ

<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետությունների միջեւ կնքվող եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին հ ամաձայնագրերը հ անդիսանում են ընդ հանուր հա րկային համաձայնագրեր, որոնք, որպես կանոն, ընդգրկում են հարկման ոլորտում պայմանավորվող պետությունների համագործակցությանը վերաբերող բոլոր հարցերը: Կանոնակարգելով պայմանավորվող պետությունների միջեւ առեւտրատնտեսական հարաբերություններում առաջացող հարկային հարցերը՝ համաձայնագիրը նշանակալի ազդեցություն է ունենում պետությունների կողմից իրականացվող ամբողջ արտաքին տնտեսական քաղաքականության վրա:

Այդպիսի համաձայնագրերի կնքումը հետապնդում է երկու հիմնական նպատակ՝

ա) բացառել եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը եւ այդպիսով նվազեցնել եկամտային եւ գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առեւտրի եւ ներդրումների վրա: Դա հնարավորություն է տալիս պայմանավորվող պետությունների շուկաներ փոխադարձ ներթափանցման ժամանակ խրախուսել ձեռնարկատիրական գործունեությունը՝ ստեղծելով մրցակցային շահավետ պայմաններ, ինչպես նաեւ խթանել ներդրումների հոսքը՝ օտարերկրյա ներդ րումների համար ստե ղծելով բարենպաստ հարկային ռեժիմ:

բ) ստեղծել կանխատեսելի եւ կայուն հարկային դաշտ: Հաշվի առնելով, որ անցումային փուլում գտնվող տնտեսություններին հատուկ է օրենսդրության արագ փոփոխությունը՝ կրկնակի հարկման համաձայնագիրը օտարերկրյա գործարարի համար միջինաժամկետ հեռանկարում ապահովում է կայուն հարկային դաշտ (քանի որ, մասնավորապես, համաձայնագրով կանոնակարգվում են եկամուտների ստացման երկրում հիմնական

եկամտատեսակների՝ շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների հարկման պայմանները եւ հատկապես դրույքաչափերը):

Համաձայնագիրը նպատակ ունի բացառել եկամուտների եւ գույքի իրավաբանական կրկնակի հարկումը եւ թույլ չտալ պայմանավորվող կողմերի ազգային անձանց նկատմամբ հարկային խտրականություն՝ բոլոր տեսակի եւ բնույթի հարկերի առնչությամբ եւ հանդիսանում է բացառիկ կարեւոր պայման այլ տնտեսական համաձայնագրերի եւ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման համար:

Համաձայնագրի նախագծով երկու պետությունների հարկային մարմինների միջեւ նախատեսվում է համագործակցության հաստատում: Այդպիսի համագործակցությունը ներառում է կրկնակի հարկմանը եւ հարկային օրենքների կիրառմանը վերաբերող վիճելի հարցերի կարգավորման հնարավորություն, ինչպես նաեւ տ եղեկատվությունների փոխանակում՝ հարկումից խո ւսափելը կանխել ու նպատակով:

Արգենտինայի Հանրապետության հետ կրկնակի հարկման համաձայնագրի նախագծի կնքումը հնարավորություն կտա զարգացնելու երկու պետությունների միջեւ ապրանքների եւ ծառայությունների շրջանառությունը, կապիտալի, տեխնոլոգիաների, մարդկանց շարժը, կնպաստի տնտեսական կապերի զարգացմանը:

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագիրը ստորագրելու առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագիրը ստորագրելու առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ՝ Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավական ակտերի փորձաքննության
վարչության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ